



## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.Ի ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ՔԱՐՈՉԸ

### Ս. Էջմիածնի ՄԱՅՐ ՏԱՃԱՐԵՆ

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգուն Մրգոյ. ամէն:

(Ե 369)

«Այսօր յարևաւ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր,  
ինզ աւետիք խմղութեան, հարսն ի յերկ եկեղեցի» (Եարական)

Միրեկի հաւատացեալ զաւակներ Մեր,

«Այսօր մեռեներից յարութիւն է առել երկնաւոր փեսան, ինզ աւետիս  
խնդութեան՝ ով եկեղեցի, հարսդ եւկրաւոր»:

Մեր Մայր Եկեղեցու երանելի հայրերը զմայլելի ոգենչումով են փառաբանել Քրիստոսի հրաշալի Յարութեան աւետիսը շարականների երգերով, որոնք փոխանցուել են սերենդի սերունդ եւ հասել մեզ, մեր օրերին, որպէս  
մեր հոգիների անուշարոյր բալասան, որպէս լուսեղին երազանք, որպէս յոյս  
փրկութեան:

Եկէք լսենք մեր նախնեաց ձայնը, նոյն շարականներով մեզ հասած.

«Ուրարիչը Աստուած ի խաչ բարձրացաւ եւ մելիմերով մեռեալներին  
խաչափայտի նաւակմամբ նորոգեալ կենդանացեց, որով հալածուեց անզի-  
տութեան խաւարը եւ գիտութեան լոյսը ծագեց՝ մեռելներից յարութիւն առած  
Քրիստոսով»:

Սյապէս անա, նաեւ մեր օրերին լոյս բաշխող աւետիսը Քրիստոսի Յարութեան, վերստին իր նառագայթներն է տարածում մեր նոգիների վրայ եւ  
լուսաւորում մեր կեաները: Խորը Յարութեան հրաց սպանը այդ լոյսի նանապարհով մեզանից ամէն մէկին մղում է մեր հայեցացի գարձնել դէպի մեր  
ներաշխարհը եւ խորհրդածել մեր կեաների իմաստի մասին, մղում է մեզ ձեր-  
բազատուել մեղին կապահեններից ու ապել երազանքը մեր հոգիների փրկու-  
թեան, յափառական կեանին արժանանալու մեծ յոյսով:

Հոգու անմահութեան յոյսը խարսիւում է մանաւանդ Քրիստոսի Յա-  
րութեան նումարտն քննոն վրայ: Պօղոս առանեալը այս յոյսն է որ զօրացնում  
է մեր մէջ, ասելով՝ «Աերք Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առաջին պտու-  
թնդեցելոց: Էանզի մարդու եղեւ մահ եւ մարդով յարութիւն մեռելոց» (Ա.  
Կորնք., ԺԵ. 20-21):

Քրիստոսի զնաբերութիւնը խաչափայտի վրայ եւ նրա յադրական

Յարութիւնը դարեւ շարունակ մօտապէս ուղեկցել են մեր բարեպահ նախներին իրենց կեանքի նանապարհին, մանաւանդ դառնութեանց, հաշածանեների ու նահատակութեանց օրերին, երբ Երանք համբեռութեամբ կրել են իրենց խաչը ու պայքարել դառն նակատագրի դէմ, այն հաւատքով, որ մահուամբ կարեի է նասնել նշանաւոր կեանքի, զննաբերումով՝ յաղբանակի եւ տառապանենով՝ անանց ուրախութիւնների: Այս ապրումներով, տեսիլներով, իրաւ յաջորդող սերունդները ամրապնդել են մեր ազգի գոյատեւելու հաւատքն ու կամեցողութիւնը մինչեւ մեր օրերը:

Մեր նախնիները ապրել են Քրիստոսի Յարութեան տեսիլքով՝ դարեւ ու դարեր, եւ իրենց աշխերը փակել յաւերժական կեանքի արժանանալու յոյսով, սրբազն ժառանգութիւն բռննելով այդ յոյսը՝ մեզ այսօրուաններին, որ ապրում ենք նոյն յօյզերով, նոյն սպասումներով, հաւատալով թէ մենք բոլոր, ի Հայաստան եւ ի սփիւս աշխարհի, գտնում ենք հրաց Յարութեան տեսիլների ներքեւ:

Հաւատում ենք նաեւ, ինչպէս մեր նախնիք, որ Յարութեան ճառագյրումը աշխարհի վրայ ճառագայրումն է արգարութեան արեգակի, որ լուսաւորում է նաեւ մեր ազգի կեանքի նանապարհը, արգարութեան յաղբութեան յոյսով, զի «արդարների ջահը լուսաւորում է, իսկ անօրէններինը՝ նանցում» (Առակի Սողոմոնի):

Մեր կեանքի ջահը լուսաւոր է մեացել նաեւ մեր օրերին, զի բազում փորձութիւններից եւ զննաբերութիւններից յետոյ, մանաւանդ 1915 թուի անաւոր ողբերգութիւնից յետոյ, մեր Մայր Եկեղեցին ու ժողովրդը, թէ՝ ի սփիւս աշխարհի եւ թէ մանաւանդ մեր մայր նողի, ապրում են հոգեւոր ու նիւրական վերահնութեան ու ազգային զարթօնիք մի շրջան, արդար սպասումների իրականացման տեսիլքով: Մնում է, որ բոլոր Հայերը, ուր էլ որ գտնուեն, ուղիղ տեսնեն եւ գնահատեն մեր հայրենական ներկան, ուղիղ տեսնեն ու գնահատեն մեր ժողովրդի ու հայրենիքի նիմնական շահերը, չմոռանան անցեալի փորձառութիւններն ու յուսախարօւթիւնները եւ համահայկական միասնութեամբ մնան նաստառն եւ անալլայ՝ մէկ ազգ, մէկ հայրենիք, մէկ Եկեղեցի նեանաբանի ներքոյ: Սուրբ Էջմիածինը օրինում է այդ ոզին, օրինում է այդ միասնութիւնը, օրինում է նայրենաւէն աշխատանքի ու պայքարի նանապարհը:

Փրկչին մեր Քրիստոսի Յարութեան յաղբանակը բող մնայ նաեւ այսօր եւ միւս մեր ազգի զաւակների ներեխանքն ու ստուգութիւնը:

Նորին սուրբ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ եւ միւս. ամէն:

3 Ապրիլ 1988